

ԱՐԲԱՆԱՅԻՆ ՄԵԹՈԴԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ
ՇԱՐԱՀԻԻՍԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Ա.

ՇԱՐԱՀԻԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽ ՔԱՆ ՄԵԹՈԴԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ
(Ներածութիւն)

Շարահիւսութիւնը որպէս քերականութեան իրաւահաւասար բաժիններից մէկը՝ արդի լեզուաբանութեան քննութեան ենթակայ կարեւոր հարցերից մէկն է։ Ինչպէս վաղ անցեալում, այնպէս էլ միջնադարում՝ շարահիւսութիւնն առանձին ուսումնասիրութեան առարկայ չի եղել, այլ ներկայացուել է քերականութեան ընդհանուր հարցերի հետ միաձուլուած։ Մեզ հասած լեզուաբանական հարուստ դրականութեան մէջ՝ շարահիւսութեան վերաբերող աշխատութիւնները հատուկ են, իսկ դրանցից արժէքաւորները՝ խիստ բացառիկ։ Ինչ վերաբերում է շարահիւսական եզրերին, պէտք է ասել, որ մեր դպրութեան վաղ արշալոյսին, ինչպէս այլ ազգերի լեզուներում, այնպէս էլ հայերէն գրութեան քերականական աշխատութիւններում՝ սահմանափակ են։ Այդ բանը բացատրում է շարահիւսական իրողութիւնների եւ հասկացութիւնների թոյլ դարգացմամբ։ Բացի այս, շարահիւսական եզրերի մի մասն էլ սկզբնական շրջանում զօրածուել են տրամաբանական ու փիլիսոփայական բնոյթի աշխատութիւններում բոլորովին այլ իմաստով ու նշանակութեամբ։

Յետագայում, անշուշտ, մեր իմաս-

տուն լեզուաբաններն ու քերականները այդ եզրերից շատերը, մշակելով եւ իմաստափոխելով, զործածել են իրենց քերականական երկասիրութիւններում որպէս շարահիւսական եզրեր¹։

Շարահիւսութեան հասկացութեան ստղծերը երեւում են մեր թուարկութիւնից մի քանի դար առաջ՝ յոյն իմաստասէրների փիլիսոփայական ու տրամաբանական աշխատութիւններում եւ քերականական երկասիրութիւններում։ Արիստոտէլի «Ստորոգութիւն» աշխատութեան մէջ, որ հայերը թարգմանել են հայ դպրութեան վաղ արշալոյսին, խօսում է բառերի կապակցութեան եւ նախադասութիւն կազմելու կարգի մասին։ «Յասիցելցս է ինչ՝ որ ըստ շարամանութեան ասի, եւ է ինչ՝ որ առանց շարամանութեան։ Արդ, ըստ շարամանութեանցն, որդան՝ մարդ ընթանայ, մարդ յաղթէ։ Իսկ առանց շարամանութեանն, որդան՝ մարդ, արջառ, ընթանայ, յաղթէ»²։

1. Տե՛ս Լ. ԽԱՉԵՐԵԱՆ, Հայ շարահիւսագիտական մտքի վաղ շրջանի պատմութիւնից (Բանբեր Մատենադարանի, Երեւան, 1962, Թ. 6, էջ 97-117)։

2. Մեկնութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, Երեւան, 1961, էջ 4։

Ինչպէս նկատում ենք, մի քանի հազարամեակ մեզանից առաջ հանճարեղ մտածողները նկատել են, որ առանձին վերացած բառերը, որոնք որոշակի իմաստաւոր կապով չեն կապակցուում ու շարահիւսում, միտք չեն արտայայտում։ Իսկ երբ այդ բառերը շարահիւսում են յատուկ կարգով (ըստ հեղինակի՝ «շարամանութեամբ»), միտք են արտայայտում, մարդկանց համար դառնում են մտքեր արտայայտելու, գէպի իրերն ու երեւոյթները վերաբերմունք ցոյց տալու եւ համընդհանուր հաղորդակցման միջոց։ Բառերի կապակցման եւ նախադասութիւն կազմելու այս հասկացութիւնը, ինչպէս նաեւ «շարամանութիւն», «ենթակայ», «ստորոգութիւն» եւ այլ եզրերն են թարգմանաբար օգտագործուել են փիլիսոփայական, տրամաբանական եւ քերականական աշխատութիւններում³։

Յոյն քերականի հայ մեկնիչները շարահիւսութեան համակարգին վերաբերող հարցերում որեւէ նոր բան չեն ասել, քան այն, ինչ կար սկզբնաղբիւրներում։ Սակայն աւելի մշակել եւ հարստացրել են դրանք։ Ըստ քերականի հայ մեկնիչների՝ «բան է հետեւակ բառի շարադրութիւն», այսինքն՝ խօսքը բառերի զօղումը, շարակապումը, շարադասումն է։ Կամ՝ «Իսկ բան՝ շարադրութիւն է բառի, յորժամ շարադրէ ոք դիւակիթն, զշարադրեացն եւ զպատերազմն եւ զմարացն եւ զհայոցն, եւ ասիցէ յարապէս՝ եթէ Դաւիթ շարադրեաց զպատերազմն մարաց եւ հայոց, որ է բան։ Արդ «Դաւիթն» առանձին բառ է, «պատերազմն» առանձին բառ է եւ այլն, իսկ շարադրութիւն նոցա բան լսի, որ կատարէ զշարադրութիւն յինքնէն»⁴։

Նախադասութեան սահմանումը այլ կերպ է տրուած միջնադարի քերական (ԺԴ. դար) Եսայի Նչեցու աշխատութեան մէջ։ «Բան ասէ՝ զրում է նա՝ զյայտնեալ եւ զկատարեալ խորհուրդն՝ որ զտրամախոհութիւն յինքն ցուցանէ, այսինքն է զաւարտումն խորհրդոյն, որ ստորակիտաւն եւ միջակիտաւ, եւ աւարտելովն յայտնի եւ դադարէ խոր-

հուրդն, այլ ոչ եթէ քաղմութիւնք անուանցն, ոչ միայն կզականքն ոչ են եւ ոչ ասին բանք, որպէս՝ մարդն, հացն եւ ջուրն, այլեւ ոչ երկաթանկք, եռալանկք եւ որք մի ըստ միոյնէն»⁵։

Բերումս հատուածներից երեւում է, որ հայ մեկնիչների սահմանումը Արիստոտէլի սահմանումից իր բովանդակութեամբ շատ հեռու չի դնում, սակայն ներկայացնում է նրա մշակումն ու դարգացումը։ Հենց սա էլ հայ քերականների առաւելութիւնն է։ Գոյց է տալիս, որ նրանք յոյն քերականների եւ փիլիսոփաների մտքերը ոչ թէ բառացի են կրկնել, այլ մշակել, դարգացրել եւ դրանց տուել են նոր կերպարանք։

Քերականի մեկնիչների մօտ նախադասութեան (բանի) մասին խօսում է նաեւ կէտադրութեան, յատկապէս վերջակէտի կապակցութեամբ։ Այսպէս՝ «Իսկ ասին եթէ բանիս մասունք են ութ, բան ասէ զյայտնեալ եւ զկատարեալ խորհուրդն, որ ստորակիտաւն, միջակիտաւն եւ աւարտելովն (այսինքն՝ վերջակէտ) յայտնի եւ դադարէ խորհուրդն»⁶։

Ասածից պարզ երեւում է, որ հայ մեկնիչները նախադասութիւն ասելով՝ հասկացել են բառերով արտայայտուած որեւէ ամբողջ, աւարտուն միտք, որին նրանք «կատարեալ խորհուրդ» են անուանել։ Երբ խորհուրդը, այսինքն՝ արտայայտելիք միտքն աւարտուում, վերջանում է, դրւում է վերջակէտ։

Յետագայ քերականներից Վարդան Արեւելցին է (ԺԲ. դար), որ իր «Վասն բանին մասանց» գրքում, հայոց լեզուի շարահիւսութեան սկզբունքների նկարագրութեան առաջին ինքնուրոյն փորձն է անում⁷։

3. Նոյն տեղում, էջ 5 եւ յաջորդ էջերը։

4. Ն. ԱԳՈՆՅ, Գիտնական պատմութիւնից հայ մեկնիչների, Պետերբուրգ, 1915, էջ 138։

5. Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր Թ. 6897, Թերթ 39ա։

6. Ն. ԱԳՈՆՅ, Նոյն տեղում, էջ 201։

7. Գ. ՋԱՆՈՒԿԵԱՆ, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները իմ եւ միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954, էջ 255։

Այսուամենայնիւ միջնադարի քերականներն էլ չկարողացան տարբերակել քերականութեան երկու իրաւազօր բաժինները՝ ձեւաբանութիւնն ու շարահիւսութիւնը որպէս առանձին ինքնուրոյն եւ իրաւահասարակ համակարգութիւններ, չկարողացան տալ դրանց սահմանումներն ու փոխկապակցութիւնը, ըստ որում շարահիւսական համակարգին վերաբերող առանձին հարցերը քննութեան առնելիս, նրանք միշտ ելնում էին ձեւաբանական համակարգից ու մեծ մասամբ օգտագործում էին նրա եղրները:

Շարահիւսութեան համակարգին վերաբերող առանձին հարցեր աւելի համարձակ ու լայն առումով չօշափւում են փոխառաջական եւ տրամաբանական աշխատութիւններում: Այդ աշխատութիւններում դործածուած եղրներն ու հասկացողութիւնները, ինչպէս ասացինք, յետագայում ներթափանցում են քերականական աշխատութիւնների մէջ:

Սիմէոն Զուղայեցին (1640ի շրջանին), հետեւելով տրամաբանական աշխատութիւններում եղած շարահիւսական սկզբունքներին, առաջինը հայ քերականագիտութեան պատմութեան մէջ ճանաչում է նախադասութեան երկու տեսակ՝ ստորագական եւ ստորադրական, որ արդի ըմբռնմամբ՝ պարզ համառօտ եւ բարդ ստորադասական նախադասութիւններն են: Նա, օրինակ, պարզ համառօտ նախադասութեան մէջ արդէն ճանաչում է եմքակայ եւ ստորագեղ հասկացութիւնները: Բացի այս, այս քերականը ճանաչում է նախադասութեան եւս երկու տեսակ՝ ստորադասական եւ բացասական, որն արդի հասկացութեամբ՝ դրական եւ ժխտական նախադասութիւններն են: Զուղայեցին նրբօրէն նկատել է նաեւ նախադասութեան անդամների զեղչուելու երեւոյթը: Երբ ենթական կամ ստորդեալը զեղչուած են լինում, այդպիսի նախադասութիւնը նա անուանում է անորոշակի. իսկ երբ այդ գլխաւոր անդամներն առկայ են նախադասութեան մէջ, անուանում է որոշակի: Այս քերականը

ենթական եւ ստորդեալը համարում է նախադասութեան սահմանները:

Յով. Կոստանդնուպոլսեցին (1674) իր աշխատութեան մէջ՝ քերականութիւնը ուղիղ խօսելու արուեստ է համարում: Իսկ ուղղախօսութիւնը «պարունակէ ընդ ինքեամբ զերկուս, այսինքն զբարեոք տեղեկութիւն եղերաց եւ զբարեոք տեղեկութիւն նոցին շարամանութեան»⁸: Ինչպէս նկատում ենք, Կոստանդնուպոլսեցին նախադասութեան գլխաւոր անդամներին՝ ենթական ու ստորդեալի եւ բառերի կապակցութեան ու համաձայնութեան վերաբերեալ ուսմունքը համարում է ուղիղ խօսելու արուեստը: Սա արդէն բաւական լուրջ վերաբերմունք էր դէպի շարահիւսութեան հարցերը: Բուն շարահիւսութիւնն այս հեղինակի մօտ խորագրուած է՝ «Յաղագս շարամանութեան»: Այս գլխում արծարծուած հարցերը մեզ բերում են այն համոզման, որ այս հեղինակը գիտակցել է արդի հասկացութեամբ համաձայնութեան եւ շարադասութեան խնդիրները: Հետաքրքիրն այն է, որ նա ճանաչել է խօսքի երեք տեսակ՝ մտաւորական, դրաւորական եւ ձայնաւորական: Ըստ էութեան՝ մտաւորական ըմբռնումը մտածութիւնն է, ներքին խօսքը. իսկ դրաւորականն ու ձայնաւորականը՝ բանաւոր եւ դրաւոր խօսքերը: Վերջին երկու եղրները, վերամբշտակուած ու ճշգրտուած, մէկընդմիջ մտել են մեր քերականագիտութեան մէջ, եւ իրենց գոյութիւնը յարատեւում են առ այսօր: Հետեւելով իր նախորդներին՝ այս հեղինակն էլ ըստ նախադասութեան բրնոյթի, սական դարձեալ առանց եղրաւորումի, ճանաչում է պատմողական (կամ ցուցական), իշխողական (կամ հրամայական), հայցողական (կամ ըզձական) եւ յանդիմանական (կամ բացայայտական) ենթատեսակները: Կոստանդնուպոլսեցին ճանաչում է «բացայայտիչ» հասկացութիւնը: Այս քերականը խօսքն

8. Զուղայեցի հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռ, 1674, էջ 120:

ըստ կառուցուածքի բաժանում է մի քանի տեսակի՝ միանդամ, երկանդամ, եռանդամ, քառանդամ եւ այլն: Սա, ըստ էութեան, պարբերոյթն է եւ արուած է յունականի հետեւութեամբ: Կոստանդնուպոլսեցու մօտ նոյնպէս կայ զեղչուած ենթականով նախադասութեան դադարաւորը: Այս ամէնով հանդերձ, այս քերականի մօտ, հայոց դասական լեզուի օրինաչափութիւններին հակառակ, ածական ամէնուրեք պէտք է համաձայնի իր դոյականի հետ, անկախ նրա դործածութիւնից՝ լինի ետադաս, թէ նախադաս: Սրա մօտ՝ նախադասութեան բնոյթը տրուած է առանց մանրամասների:

Քերական Խաչատուր Արզրումեցին (1696 թ.), հետեւելով իր նախորդներին, տալիս է «բան»ի սահմանումը. ճանաչում

է նախադասութեան երկու տեսակ՝ կատարեալ եւ անկատար. անարկ է անում, այսինքն՝ առանց տարբերական տալիս է ուղիղ եւ անուղղակի խնդիրները, առանց եղրների շեշտում է նախադասութեան բրնոյթը: Նա ճանաչում է սահմանական, հրամայական, ըզձական, ստորադասական, անոշական (sic) եւ անբերոյթ տատեսակները:

Ահա այն ամէնը, ինչ գոյութիւն ունէր շարահիւսական համակարգի մասին՝ նախորդ շրջանի քերականական աշխատութիւններում, մինչեւ Աբրահայր Մխիթար Սեբաստացին:

(Շար. 1)

ՅԱԿՈԲ Մ. ՄԵԽԻԹԱՐԵԱՆ
(Դասախօս, Երեւան)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասախօս Յակոբ Մ. Մխիթարեանի այս հմտալից ուսումնասիրութիւնը՝ Մխիթար Աբրահայր շարահիւսական ըմբռնումներու մասին, յամաձայնեալ քերականութեան ստացած եմք երեւանէն, 1966 թուականի Յունիսին, Սփիւռհայայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի մամուլի բաժնի վարչութեան կողմէ, առ ի հրատարակութիւն:

Հանոյքով այժմ կը մերկայացնենք գայն մեր ընթերցողներուն, յօդուածաշարի ձեւով, ուր ամփոփուած է յաջող վերլուծում մը Մխիթար Աբրահայր գրաբարի ընդարձակ քերականութեան, եւ գնահատանք՝ անոր խորունկ արժէքին:

Մեր անկեղծ շնորհակալութիւնը՝ Սփիւռհայայութեան հետ Մշկ. կապի կոմիտէի Պատուարժան վարչութեան եւ յօդուածաշարիս յարգելի Հեղինակին, քերականագիտական մորաճոր մուսնումներու ջերմ մագրանքներով:

ԽՄԲ.